



Դասընթացի ավարտին մասնակիցներին կտրամադրվի՝

- ավարտական սերտիֆիկատ (ավարտական քննության դրական արդյունքի՝ 50% և ավելի միավորի դեպքում)
- մասնակցության տեղեկանք (ավարտական քննության բացասական արդյունքի՝ 50%-ից ցածր միավորի դեպքում)

Լավագույն արդյունքներ ցուցաբերած 40-50 ուսանողների համար ՀՌՀ-ն կկազմակերպի հավելյալ անվճար երկամսյա դասընթաց՝ նվիրված C++ խորացված գիտելիքներին և տվյալների կառուցվածքին: Դասընթացը հաջողությամբ ավարտած մինչև 5 ուսանող հնարավորություն կունենա վճարովի հիմունքներով ներառվելու բուհի ներքին գիտահետազոտական աշխատանքներում:

Մանրամասները՝ www.edu2020.am կայքում:



«Ծրագրավորման հիմունքներ»

այլ ոլորտներից դեպի տեխնոլոգիական ոլորտ
սկսնակների համար

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից
հայտարարված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայ-Ռուսական
համալսարանը իրականացնում է այլ ոլորտներից դեպի տեխնոլոգիական ոլորտ
անցում կատարող սկսնակների համար «Ծրագրավորման հիմունքներ» առցանց
անվճար դասընթաց, որը նախատեսված է 2000 մասնակցի համար:

Դասընթացը հնարավորություն է տալու՝

- ծանոթանալ համակարգչային գիտությունների հիմունքների հետ
- հաղորդել C++ ծրագրավորման լեզվի հիմնային գիտելիքներ
- ձևավորել կարողություններ և հմտություններ, որոնք կնպաստեն ուսանողի
հետագա կրթությանը ծրագրավորում մասնագիտության մեջ
- զարգացնել ինժեներական մտածողություն և մասնագիտական
հետաքրքրասիրություն

Ծրագրին կարող են մասնակցել 18 տարեկանը լրացած այն ՀՀ և Արցախի
Հանրապետության քաղաքացիները, որոնք կանցնեն դասընթացի ընդունելության
կարգը և կհամապատասխանեն ծրագրի նպատակին:

Գիմորդների նախնական գնահատումն իրականացվելու է առցանց թեստի,
անհրաժեշտության դեպքում՝ հարցազրույցի միջոցով: